

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Պետրոս Ս. Պետրեան. ԼԵՁՈՒ ՆԱԽՆԵՄՈՑ, Գրաբարի դասագիրք, Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Ա. Մանուկեան Մշակութային հիմնադրամի, Պէյրութ, 1972, 248 էջ: Գրասագրի «Դասերու հասուածներու աշխարհարար թարգմանութիւնները ուսուցիչներու գործածութեան համար», 32 էջ:

Ի տարրերու թիւն Հայաստանի միջնակարգ դպրոցների, Սփիւռքի հայկական սրահ երկրորդական վարժարաններում զեռես դասաւանդւած է գրաբար, թէև, ինչպէս նկատել է առիթս գրաբարի այս դասագրքի հեղինակը, «ներկայիս անհամեմատ նւազած է (և երթալով կը նւազի) գրաբարին կատարելապէս տիրապետող ուսուցիչներուն թիւը» (էջ 3): Հաւանաբար այս թերին լրացնելու համար է որ հեղինակը Հայաստանից հրաւիրուած է ելել կիպրոսի Մեղիգոնեան կրթական Հաստատութիւն գրաբարի դասաւանդութեան համար (էջ 3):

Հեղինակը նկատել է նաև, թէ արտասահմանի հայկական դպրոցները չունեն գրաբարի լաւ դասագիրք, բացի «Սփիւռքի դասագրան աստիճաններու կրթական հաստատութիւններէն ներս» օգտագործուող «Բլիւրացի Ի Գրոց Բարբառ» ձեռնարկից (հեղինակ՝ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան): Հեղինակի այս դիտողութիւնը ճիշդ է. ուստի նա յանձն է առել իր «համեմատ ոյժերով սոյն դասագիրքը պատարասել», նպատակ ունենալով հետեւելը. «Հայ վարժարանի ներկայ աշակերտութեան ձեռքը պէտք է արուի դասագիրք մը, որ մէկ կողմէն զերծ ըլլայ Բեւեականական խրեմարան քիւններէ, իսկ միւս կողմէն՝ մամուլովին խորբոսուած ըլլայ թարգմանութեանց, ալիւ սճական վերլուծութիւններու վրայ, կարենալ ապահովելու համար լեզուին ծանօթացումը՝ անոր գրապոլլիւս մշակման ճամբով: Մանաւանդ առաւելագոյնս օգնէ ուսուցչին, բոտ կարելոյն դիւրացնէ անոր գործը» (էջ 3):

Կ'ուզենայինք մի քանի խօսք տակ մեր ընդգծած «քերականական խրթնարանութիւններ»ի մասին:

Գրաբարը, ինչպէս և ամէն մի լեզու, ունի փրականական ոչ թէ խրթնարանութիւններ, այլ կանոններ, որ մասնագէտ ուսուցիչը կարող է բացատրել յստակօրէն, առանց խրթնարանութիւնների (այս բառի իսկական իմաստով), եթէ ինքը յստակօրէն է պատկերացնում զրանք: Խրթին բառը նշանակում է «միին, զժուարիմաց, խորին» (Առնեռն բառարան). դասագիրքն իրօք պէտք է զերծ լինի ոչ միայն քերականական, այլև ամէն կարգի խրթնարանութիւններից: Սակայն «քերականական խրթնարանութիւններ» տակալով հեղինակը նկատի է ունեցել քերականական կանոնները, որոնց սխառմային, կանոնաւոր և աստիճանական ուսուցումից իսկապէս «զերծ է» նրա դասագիրքը, թէև նա յայտարարում է, թէ այն 65 դասերը, որոնցից բաղկացած է ձեռնարկը, «Հետաքրքիր ուսումնասիրողը ամանատարական դասընթացէն մինչև համալսարանականը կ'առաջնորդեն, քայլ առ քայլ» (էջ 4): Մենք զեռ կ'անգրադառնանք այս հետաքրքրական հարցերին:

Հեղինակի նպատակի մասն են կազմել նաև հետեւեալ բարի դիտաւորութիւնները. դրաբարն այս դասագրքով հետաքրքրութեամբ ուսումնասիրողին «քայլ առ քայլ» առաջնորդել «ամենատարրական դասընթացքէն մինչև համալսարանականը . . . Ուստի իւրաքանչիւր կըրթական հաստատութիւն՝ իր նպատակներուն և ծրագրին համապատասխան նիւթ կրնայ քաղել անկէ (Մեղգոնեանի մէջ, օրինակ, կը մասնացուին առաջին 35 դասերը)»։ Միա՞ն 35. բայց չէ՞ որ այդ դասերի մէջ ամփոփ խտացուած չէ դրաբարի քերականութիւնը. դրանց յաջորդող դասերի քերականական ձևերի «բացատրութիւնները» կամ քերականական վերլուծումների կողքին տեսնում ենք ահա «Ու հոլովում» (ԼԶ. դաս), «Կարգ մը (գարտուղի) բաւերու հոլովումը՝ ելբայր, բոյր, ալր, սէր» և նման շատ գործածական գոյականների հոլովումը (ԼԷ. դաս), «Ի և ե հոլովումներ» (Խ. դաս), «Ի-Ա խառն հոլովում» (ԽԴ. դաս), «Նախդիրներ և նախադրութիւններ» (ԽԸ. դաս), «Սահմանական եղանակի ներկայ ժամանակ» (Մ. դաս) . . . «Սահմանական եղանակի անցեալ անկատար ժամանակ» (ՄԳ. դաս) և այլն և այլն։ Քերականական այս և նման հիմնական ու ամենակարեւոր գիտելիքների կանոնաւոր, աստիճանական ուսուցումը փոխարինուի է ընթերցանութեան համար ընտրուած հատուածի քերականական ձևերի անկապ, աշակերտի յիշողութեան մէջ մտաւոր համար հիմք չունեցող «բացատրութիւններով»։

Հեղինակին թուացել է նաև, թէ նա պատրաստել է այնպիսի դասագիրք, որով «հետաքրքիր ուսումնասիրողը» կարող է ինքնուրոյն դրաբար սովորել. «Այսպէսով գիրքին կարծեք տուած կ'ըլլանք տեսակ մը ինքնուսուցիչի բնոյթ» (էջ 5). այո՛, «կարծէ՛ք»։ Հեղինակն այնպէս է կարծել, մտածելով, որ քերականութեան աստիճանական ուսուցումը կարելի է փոխարինել «ձևերուն նմանողութեան և զգացողութեան» (էջ 4) ընկալումով. «Օրինակ՝ աշակերտէն կ'անկալուէի թարգմանել լիւսսեցիկ (պիտի վնասեմ) բառը, դասին մէջ հանդիպած խաբեցիկ (պիտի խաբեմ)ի նմանողութեամբ, առանց որ ինք գիտնայ թէ այդ ձևը ստորագասական եղանակի ապառնի ժամանակ է, ներդարծական, եղակի թիւ, Ա. դէմք . . .»։ Հաւանաբար մեզ պէս շատերն էլ կը զարմանան այս կարգաւորով. չէինք կարծում, որ ապառնիի կազմութեան բացատրութիւնը զաղանի պէտք է պահել։

Հեղինակի վերջին կարծիքն իր դասագրքի մասին հետեւեալն է. «Այս դասագիրքին ամէն ծանօթութիւն (անգամ հպանցիկ), վստահ ենք, պիտի բերէ համոզումի մը, թէ այն ոտնդնուած է, որպէսզի հետաքրքրութիւն ու սէր առաջացնէ դէպի մեր Ոսկեղինիկ Գրաբարը, դառնայ ուղեցոյց՝ մեր մեծ ու չոտայ նախնիներէն ժառանգութիւն մնացած այս հարուստ այլ չքեղ լեզուին ու ոճին, այլև խորունկ ու պայծառ միտքերուն հաղորդակից ըլլալուն» (էջ 5)։ Երեւէ՞լ թէ հեղինակի ինքնավստահութիւնը խաբուած չլինէր։ Բայց մենք ոչ թէ «հպանցիկ», այլ մի քիչ աւելի մանրամասն ծանօթանանք նրա դասագրքին, որ ձեռագիր վիճակում փորձարկել է Մեղգոնեան սաներին դասաւանդելիս (միա՞ն 35 դասերը թէ ամբողջ դասագիրքը), «կատարելով միանգամայն պէտք եղած սրբագրութիւնները, ճշգրտումներ ու յաւելումներ» (էջ 3), հետեւելով «ուրիշ վարժարաններու ուսուցիչներու, այլև ուրիշ գիտականերու (ինչպէս, անշուշտ, դասագրքի խմբագիր՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճեմարանի գրաբարի դասախօս Սամուէլ Անթոնեանի) թելադրութիւններուն»։

Դատադրքի 248 էջերը բովանդակում են «Մուտք»ը, այսինքն՝ նախաբանը կամ ներածութիւնը, 65 դաս, վարժութիւններ, «չափ համաժողով ԲԱՅԱՅՈՒՄՆԵՐԻ մը, այլև ԱՌԱՐԿԱՅԻՆԱՅԻՆԵՐԻ, որ հետաքրքրուողին պիտի օգնէ դիւրութեամբ գտնելու այն դասը, ուր քերականական կամ սեռական համապատասխան կարեւոր երևոյթը բացատրուած է» և «Բանականութիւն»ը: Նոյն՝ Արեւմտահային ոչինչ չափող այս «առարկայացանկ» բառի փոխարէն նոյնընտրելի էր «Քերականական նիւթերուցանկ»ը, քանի որ իր «Մուտք»ի մէջ հեղինակը խօսում է «քերականական նիւթ»ի մասին: Երկրորդ՝ հակառակ հեղինակի համոզման, այդ «առարկայացանկ»ը դիւրութեամբ չպիտի օգնէ հետաքրքրուողին, քանի որ այրեցնական չէ (երեք էջ), ի տարբերութիւն նման բոլոր առարկայացանկերի: Նրանում նշուած են դասերի համարները (և ոչ թէ գրքի էջերը), և քանի որ դասերի համարները կրկնուած չեն՝ դատադրքի ամէն էջի վերեւում, ուստի պատկերացնում էք նոյնիսկ լաւագոյնս արամադրուած «հետաքրքրուող»ի դժկամութիւնը: Իսկ գրքի «Բանականութեան» մէջ նշուած են միայն ընթերցանութեան համար ընտրուած հատուածները՝ կոչուելով «Դասեր»: Բայց չէ՞ որ դասերի մաս են կոչուած նաև որոշ դասերից յետոյ գետեզուած զուս փերականական համաժողով տեղեկութիւնները, որոնք սակայն նշուած չեն «Բանականութեան» մէջ, ի տարբերութիւն, դարձեալ, սովորական դատադրքերի:

Ճնշող մեծամասնութեամբ, իւրաքանչիւր դաս բաղկացած է ընթերցանութեան մի փոքրիկ հատուածից, «Բացատրութիւններ»ից և վարժութիւններից, որոնք «Իրենց քերականագ մասով թարգմանական են, սկսեալ առաջին իսկ դասէն, ու կ'ապաւինին բառերուն ոչ թէ քերականական վերլուծութեանց, այլ ձևերուն նմանողութեան և զգացողութեան» (էջ 4): Որոշ դասերի «Բացատրութիւններ»ից յետոյ արեւած են նաև փերականական տեղեկութիւններ: Խօսենք ընթերցանութեան «Կտորներ»ի և քերականական բացատրութիւնների մասին:

Հեղինակը «գրական կտոր» է կոչել ընթերցանութեան և «Բացատրութիւններ»ի համար ընտրուած փոքրիկ հատուածը: Ի հարկէ, գրաբար կարելի է սովորեցնել որեւէ «կտոր» վերցնելով իրեն ընթերցանութեան նիւթ. սակայն ամէն մի «կտոր» գրական չէ: Հեղինակի համար կարծէք դեռևս յայտնաբերուած չլինէր դասական կամ մեսրոպեան գրաբարը, և շատ յաճախ աշակերտներին մատուցել է «Գրաբարի դատադրքերէ» (էջ 7, առաջին դասի յոգնակի անորոշ աղբիւրն է) առնուած «կտորներ», որոնք այդ անյայտ «դատադրքեր»ի հեղինակների կողմից են գրուած կամ թարգմանուած, ինչպէս «Ընթացք ի Գրաց Բարբառ»ի(*) երկրորդ մասից առնուածները, որի «Ձեկոյց»ի մէջ ասուած է. «Իսկ Բ. մասին հատուածները, որոնք կամ ռաւանաւոր, իւր բարգմանութիւններ կամ գրումներ են, ինչպէս յայտնի է, և ընտրուած են նիւթի պէսպիսութեամբ աւելի հմանիլ ընկալու համար գրաբարի սուսմը»: Այս «հաճելի» ամականից հրապարակուած՝ հեղինակը կարծել է, թէ ինքն էլ նման «կտոր»ներով կ'որոյ է «հետաքրքրութիւն ու սէր»

* Էջ 101ի հատուածի մէջ («Սերմանացանն») պահելով նրա սխալը, որով լիւրջ ներկան դարձել է հրամայական՝ «լիւրջ», հակառակ Աւետարանի հրատարակութեանը Հմմտ. «Իսկ քանի մ'ուրիշ սահմ. ներկայ» որ զրոյց մէջ հրամայականի տեղ գրուած և դարձուողի հրամայականը կարծուած են, լոկ թարգմանութեան տարբերութիւն են և ոչ հրամայական, ինչպէս Լսէլ, ահա ել սերմանացանն (Փերակ. հայկ. լեզուի, 373):

առաջացնել «դէպի մեր Ոսկեդինիկ Գրարարը, դառնալ ուղեցոյց՝ մեր մեծ ու շատլ նախնիներէն ժառանգութիւն մնացած այս հորուստ այլ չքեղ լեզուին ու սէին, այլև խորունկ ու պայծառ միտքերուն հաղորդակից ըլլալու» (էջ 5): Բայց չէ՞ որ այդ «կտոր»ները լեզուն հետու է «ոսկեդինիկ գրարար» լինելուց, և ոչ էլ դրանց առակային բովանդակութիւնը («Որսորդն և կաքան», «Էշք Սաւուղայ» և այլն և այլն) մեր նախնիների «խորունկ ու պայծառ» մտքերն են: Նման կտորներով հորուստ են Սփիւռքում 19րդ դարում և դարասկզբին հրատարակուած գրարարի դասագրքերը. նրանց հետեւելով՝ Պ. Պէտրեանը, թէև Հայաստանում բարձրագոյն կրթութիւն ստացած, ուր, Սփիւռքի համեմատութեամբ, շատ բարձր են հայագիտական ուսումը, ուսուցման նիւթը և դասաւանդման մեթոտը, իջել է այդ դասագրքերի հեղինակների մակարդակին ոչ միայն ընթերցանութեան նիւթերի ընտրութեամբ, այլև ուսուցման մեթոտով, ինչպէս կը տեսնենք ստորև: Բաղմաթիւ «կտորներ» առնուած են միջնադարեան առակադիր Մխիթար Գոշից, երբեմն ժամանակի ուղղագրութեամբ՝ «յըսկգրանն» (էջ 110): Նա այդ հատուածներն ընտրել է ոչ թէ դրանց լեզուի դիւրութեան, այլ առակային թեթեւ կամ «հաճելի» բովանդակութեան համար: Առաջին իսկ դասի հատուածում, օրինակ, ուսնենք քերականական բաղմադան երեսոյթներ՝ տարբեր հոյովներ և ժամանակներ:

«ՈՐՍՈՐԳՆ ԵՒ ԿԱՔԱԿՆ. Ուսորդն կալաւ կաքաւ մի եւ կամէր զեկուլ: Եւ տեւ կախան.

«Մի՛ սպանաներ զիս, զի ես խարեցից զբազում(*) կախուս եւ ածից յակնոսս քո»:

Եւ տեւ ուսորդն.

«Այժմ ոսուգիւ մեռցիս ի ձեռաց իմոց, զի զսեբեկիս եւ զագգականս քո մտանես ի մահ»: (Գրաբարի դասագիրքերէն):

«Բաղատութիւններ» բաժնում հեղինակը տեսլ է մեր բնագծած բառերի քերականական յատկանիշները, այսինքն՝ դրանք քերականօրէն վերլուծել է և թարգմանել: Սոսենք այդ իսկ բաղատութիւնների մասին:

«Մուտք»ի մէջ տսուած է, թէ «Բաղատութիւնները, որ բաւական մանրամասն են, դարձեալ ուսուցիչներու համար են(**), առ ի դիւրութիւն, որպէսզի յատկ պատկերացնելով նիւթը՝ կարենան ապահովել մատչելի դասաւանդութիւն մը (այս բաղատութիւններէն անսնք որ անհրաժեշտաբար յանձնարարելի են աշակերտներուն, եռաստղով կը սկսին)» (էջ 4): Ակամայ հարց ես տալիս. եթէ այդ բաղատութիւնները ուսուցիչների համար են, ապա ինչո՞ւ տեղ են գտել աշակերտի դասագրքում և չեն ամփոփուած ուսուցչի պրակի մէջ. առաջին դասի բաղատութիւններից այս մենաշնորհին արժանացել է միայն զի բոտը՝ իր բաղմամտութեան պատճառով թերեւս:

Հեղինակը կարծում է, թէ այդ իր բաղատութիւնները կ'ապահովեն «մատչելի դասաւանդութիւն մը»: Բայց այդ բաղատութիւնները չեն ապահովի գրարարի սիստեմային և կանոնաւոր դասաւանդութիւն,

* Այստեղ անհրաժեշտ էր անորոշ, այսինքն՝ առանց Զ նախորդի հայցական:

** Ինչպէս ընթերցանութեան հատուածների աշխարհաբար թարգմանութեան պրակը:

աշակերտի առաջ չեն բացառապես գրաբարի համակարգն ու կառուցուածքը որպէս լեզուի. իսկ սրանց ըմբռնումը շատ կարեւոր է որեւէ լեզուի ուսուցման, էութեան ըմբռնման համար, ինչպէս Ճշգրտէն սովորեցնում է ընդհանուր լեզուարանութեան դասախօս Պրօֆ. Էդուարդ Աղայեանը (Երևանի համալսարան) իր «Լեզուն իբրեւ համակարգ և կառուցուածք» յօդուածում («Բանբեր Երևանի համալսարանի», 1972, թ. 2): Ընդհակառակն, մենք կարծում ենք, որ քերականական այդ բացատրութիւններն ու բառի՝ գրանց յաջորդող թարգմանութեան ընթերցումը պարտադիր պիտի լինի աշակերտի համար ևս: Սակայն սերիշ հարց է, թէ նա կ'իւրացնի՞ գրանք: Թէ չէ՝ հեղինակի սպասած «մատչելի դասաւանդութիւն»ը վերածուելու է հեռեկալի, որ տարածուած է Սփիւքի հայկական դպրոցներում. ուսուցիչը (մանաւանդ գրաբարին կատարելապէս չտիրապետողը) այդ բացատրութիւնների շնորհիւ «յրստակ» պատկերացնելու է նիւթը, այսինքն՝ մատուցուած առակի նիւթը (որ բարդ չէ), առկը թարգմանելու է աշակերտներին, թերեւ նրանց զբիւ տալով կամ արգելելով թարգմանութիւնը գրի առնել (այդ արգէն ուսուցչից կախում ունի), աշակերտը մի կերպ սովորելու է թարգմանութիւնը և վերադարձնելու է «զկայսերն կայսեր» առաւել կամ նուազ յաջողութեամբ (այդ էլ աշակերտից կախում ունի): Եւ այսպէս շարունակ: Աշակերտը պիտի կարդայ և թարգմանական վարժութիւններ կատարի, «առանց որ ինք գիտնայ թէ այդ ձեւը ստորադասական եղանակի ապառնի ժամանակ է, ներդրածական, եզակի, Ա. դէմք...» (էջ 4): Եւ, օրինակ, Ժ. դասի 15րդ (ԲԲԵՅԻՅ, ԱԲԿԻՅ) բացատրութեան մէջ, աշակերտը կամ ուսուցիչը կարդալու է. «Զեւն համար հմտ. Ա. դաս, ԽԱԲԵՅԻՅ, ԱՄԻՅ, Է. դաս, ԳԻՏԱՅԻՅ»: Այս բացատրութիւն՝ յղումը եթէ ուսուցչի համար է, անօգուտ է, քանի որ առաջին իսկ դասին (և դրանից էլ առաջ) նա պիտի գիտեցայ, թէ բայի մ'ը ժամանակի ձևեր են «բրեցից» և «արկից». իսկ եթէ աշակերտի համար է այդ յղումը (թէ և եռասու չունի տուեալ բացատրութիւնը), ապա նախ՝ դժուար թէ նա յաղթահարի իր բնական օլարկոտութիւնը և Ա. դասի մէջ որոնի «խարեցից» և «ածից» ձևերի բացատրութիւն»ը: Եւ այսպէս կան բազմաթիւ յղումներ նախորդ դասերի բացատրութիւններին, լոկ նրա համար որ բացատրուող դասերին յատուկ են միեւնոյն կամ նման վերջուորութիւնները (—ից՝ վերելի ձևերում): Արդ, այդ ձանձրացուցիչ և բազմաթիւ յղումների փոխարէն նախընտրելի և անհրաժեշտ էր աստիճանաբար սովորեցնել, թէկուզ այդ «ընտիր կտորներով», գրաբարի նախ տարրական գիտելիքները, և ապա աւելի «խրթինները»: Ինչպէ՞ս կարելի է սանակոխ անել ու անտեսել լեզուի քերականութեան իրօք մտաչելի, դիւրին և աստիճանական ուսուցումը: Հեղինակը թերեւս ցանկացել է դասաւանդել և դասաւանդել տալ նմոյշների (անգլ. patterns), կամ ինչպէս ինքն է ասում՝ «ձևերուն նմանողութեան և զգացողութեան» եղանակով, սակայն առանց այդ դասաւանդման մեթոտի էութիւնը հասկանալու: Այդ մեթոտի հեռեկանները առաջին իսկ դասին չեն ներկայացնում լեզուի բազմաթիւ քերականական ձևեր. այսպէս օրինակ՝ Ա. դասի հասուածում (տե՛ս վերը) ունենք՝ հոլովներից՝ ուղղական, հայցական (որոշեալ և անորոշ, եզակի և յոգնակի), յոգնակի բացառական, ժամանակներից՝ ներկայ, կատարեալ, անկատար, երկրորդ ապառնի, արգելական, նաև դերանուններ, նախդիրներ և այլն:

Հեղինակը քերականութեան ուսուցումն ամբողջովին չի վանել

դատադրքից, այլ՝ մերթ ուսուցչի, մերթ նրա և աշակերտի համար քերականական գիտելիքներ անկապ ձևով տարադնել է «բացատրութիւններ»ի մէջ բազմաթիւ անտեղի կրկնութիւններով. կամ էլ «բացատրութիւններ»ից յետոյ, առանձին ներկայացրել է վերնագրուած քերականական գիտելիքներ, որոնք սակայն իրենց տեղում չեն և չառ ու չառ ուշացած են. օրինակ՝ սահմանական հղանակի ներկայ ժամանակի մասին խօսուած է Յ. (50րդ) դասում, մինչդեռ առաջինում իսկ ունենք ներկայի ձևեր: Քանի որ ներկայի կազմութիւնը բացատրուելու էր առանձին, ապա այն պէտք էր անել ժամանակին և իր անհրաժեշտ տեղում: Նոյնը վերաբերում է նաև քերականական միւս դասերին:

Շատ կարեւոր հարց է, միւս կողմից, թէ որքանով վստահելի է հեղինակի քերականական ուսուցումը. այստեղ նկատելի են բազմաթիւ թերութիւններ: Խօսենք սրանց մասին:

1. «Երբ բառ կը վերջանայ բաղաձայնով եւ ունի Ս, Գ կամ Ն յօդեր, կամ ալ յօլեակի հայցականի Ս վերջաւորութիւնը, — այս զիւրեւոյն եւ բառին վերջին բաղաձայնին միջեւ «Ը» կ'աւրասանուի» (էջ 7): — Այս կարգում ենք Ա. դասի «Ընթերցանութեան կարեւորագոյն կանոններ» վերնագրի տակ, որոնք, կարծում ենք, աշակերտին էլ են վերաբերում, ինչպէս և ուսուցչին: Արդ, աշակերտը ղեւ զաղափար չունի յոգնակի հայցականի Ս վերջաւորութեան մասին: Սակայն մեր հիմնական առարկութիւնն այն է, որ Ընթերցանութեան կանոնը վերաբերում է ոչ միայն Ն յօդին, այլ, ինչ որ չէ ասուած, այնպիսի բառերի — ցնչիւնին, ինչպիսին են՝ ուսումն, դուռն և այլն, որոնց — ց գիրն արմատական է:

2. «Գրաբարը շոտ յաճախ միջակէս (.) կը գործածէ հոն՝ ուր աշխարհաբար կը նախընտրէ վերջակէսը (:):» (էջ 9): — Այս կարգաւորով ստիպուած ենք ենթադրելու, որ հեղինակը գաղափար չունի հայերէն ձեռագրերի կէտագրական նշանների մասին, որոնք նայն նշանակութիւնը չունէին ինչ որ այսօր գործածւողները: «Գրաբարը» չէ բնագրերը կէտագրողը, այլ՝ հրատարակիչը:

3. «Երբ ... յօդերուն (Ս, Գ, Ն) կամ իր վերջաւորութեան Ս ունեցող բառին յօդորդէ ձայնաւորով սկսող բառ, անուցմէ առաջ «Ը» չ'աւրասանուի, այլ այդ բաղաձայնները աւրասանութեա ք կը միանան յօդորդող ձայնաւորներուն ... Օր.՝ զկարմրիկն հղիգնիկ ... գապարանս արքունի ... ասպատակումն եղեսիս քաղաքին ... վասն որոյ» (էջ 9): — Ընթերցանութեան այս կանոնը չի կարելի ընդհանուր համարել, մանաւանդ այնպիսի դէպքում, ինչպիսին է ապստոսն արքունի: Միւս կողմից՝ հեղինակը նկատի ունի Ն յօդը. արդ, իր օրինակներից վասն բառի — ց գիրը յօդ չէ. տարակուսելի է նա օրինակի ասպասակումն բառի նոյն հնչիւնը՝ յօդ է թէ արմատական (այս բառը չկայ Առձեռն բառարանում):

4. «Ի նախդիր այս հոլովին հետ (եզակի տակոն) կը կազմէ ներգոյական ... Այսպէս է նաեւ ի մարմնի (եզ.)» (էջ 10, բացատր. 2): — Ուսուցիչը կամ աշակերտը բնականաբար կարծելու է, որ մարմնի հզակի տրական է, ինչ որ սխալ կը լինէր:

5. «Ընդհանրապէս Զ նախդիր ամենեւ յաճախ կը ստանան հայցական հոլովով դրուած անուններ: Օր.՝ ... զի՞նչ» (էջ 10, բացատր. 3): — Հեղինակը թո՛ւն արդեօք ուսուցչին կամ աշակերտին, երբ այստեղ իրեն օրինակ բերուած զի՞նչ հարցական դերանունը գործածուած

կը լինի իրրեւ ուղղական հօլով. այդ դերանունն առաջին հերթին ուղղական է (թէն պատմականօրէն, իր ծագումով հայցական է) և հայցական հօլովում զ նախդիր չի կարող առնել: Բացի այդ, զի՞նչ և միւս օրինակներէն զնո և զսո բառերը անուններ չեն, այլ դերանուններ:

6. «Ի նախդիր նայականով դուռն բառին (Սեւին) արականի իմաստ կու տայ ... նեան կազմութիւնները գրաբարի փրականութեան մէջ կը կոչուին «ՆԱԽԴՐԻԻ ՏՐԱԿԱՆ» ... Այսպէս և նաեւ Ի ՄԷՋԲ — «մէջին» (էջ 12, բացատր. 2): — Հայտատանում գրաբարի քերականութեան դասաւանդումից վաղուց դուրս է հանուած, և իրաւամբ, «նախդրիւ արական» հնացած արտայայտութիւնը. հեղինակը հաւատարմեւ է Սփիւռքի «Գրաբարագէտ»ներին, որոնք դեռ չեն մոռացել այն: Նա նոյնիսկ չի հասկացել «նախդրիւ արական»ի էութիւնը. «Աղէկ միտք առնելու է՝ որ նախդրիւ արական չեն այլ ներգոյական՝ երբ բոլի նստեալ ի կառս. եղան ի բանս ... հեծալ ի սեռան ... (Քերականութիւն հայկազնեան լեզուի», էջ 237, ծան. 2). Իսկ նա այս բոլորը համարում է «նախդրիւ արական»: Հարցի էութիւնն այն է, որ բացատրուող «ի սեռան» արտայայտութեան մէջ նախդիրը ոչ թէ արականի իմաստ է տալիս, այլ «ի սեռան»ը, այսինքն՝ նախդիրն ու նրա խնդիրը միասին կարելի է թարգմանել արականով՝ (հեծալ) «սեռակին» կամ «սեռակին վրայ»: Էջ 10ի 2րդ բացատրութեան մէջ հեղինակը ասում է, թէ «ի ծովուն» դարձուածքի մէջ նախդիրը կը թարգմանուի «մէջ» բառով. ուստի կարող ենք ասել, որ «ի սեռան»ի մէջ թարգմանում է «վրայ»՝ «սեռակին վրայ», ուր գոյականը սեռական հօլով է, և, հետեւաբար, Ի նախդիրը ոչ թէ արականի, այլ սեռականի իմաստ է տալիս, ինչ որ սխալ է: Եւ վերջապէս, «ի մէջք» արտայայտութեան «մէջք» բառը հայցական չէ ըստ դասագրքի, քանի որ նախորդ երկու դասերի մէջ մի քանի անգամ և յաջորդ էջում ասուած է անուղղակի կերպով, որ յոգնակի հայցականի վերջաւորութիւնը — ա է. հմմտ. «Ս—ն է յոգնակի հայցականին վերջաւորութիւնը, իսկ Բ—ն յոգնակի ուղղականին է» (էջ 13, բացատր. 8):

7. «Գրաբարի մէջ ընդհանրապէս անցեալ դերբային քով եկրական ամենեկն յոճախ սեռական հօլովով կը դրուի» (էջ 15, բացատր. 1): — Չէ ասուած, թէ այս դէպքում ենթական ուրիշ ի՞նչ հօլովով կարող է դրուել: Բայց մեր բուն առարկութիւնն այն է, որ հեղինակի ընդհանուր յայտարարութիւնը սխալ է, որովհետեւ անցեալ դերբայի ենթական կարող է նոյնքան յաճախ դրուել ուղղական, Գրաբարի քերականութեան մեծագոյն հեղինակութիւնը ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ աշխատութիւնն է: Այստեղ, էջ 213, կարգում ենք, որ «Ընդունելութեան անցեալը ... սեռական անուն բայի կ'առնու», բայց առդատակում ասում է, թէ «Դիմաւոր բայի մը հետ կապուած անցեալներուն ուղղական անուն բայի կը տրուի»: Նաեւ էջ 214ում՝ «կը գտնուի անցեալի քով նաեւ ուղղական անուն բայի, մանաւանդ երբ անորոշ բառ է»: Հեղինակը սխալ է ձեւակերպել նաեւ իր հետեւալ բացատրութիւնը, որ դարձեալ անցեալ դերբային է վերաբերում. «Չէ՛ր նՈՅԱ ... ՊԱՏԱՌԵԱԼ յակօսս ... Գրաբարի մէջ գրեթէ ընդհանուր օրէնք էր այսպիսի նախադասութիւններու մէջ (որոնք ունին անցեալ դերբայ՝ օժանդակ բայի հետ) եկրական դեմ սեռականով» (էջ 21, բացատր. 13). — աւելորդ է հեղինակի «գրեթէ» մեղմացուցիչը, որովհետեւ իրօք այսպիսի նախադասութիւններին մէջ քերականական ենթական անորոշ դերբային է, սեռականը յատկացուցիչ է, և պէտք է միայն ու միայն սե-

առկան դրուի (տե՛ս ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ, էջ 203, 205 և մասնաւոր 214, կանոն Դ.):

8. «ԶԳՏԻՆ ... Աւելի նեղ ձեւը պիտի ըլլար՝ ՈԶ ԳՏԻՆ» (էջ 21, բացատր. 11): ոչի մասին կարգում ենք նաեւ. «Գրաբարի մէջ ընդհանրապէս ժխտականը կը կազմուի ՈԶ բառ-նշանիկի օգնութեամբ ... Շատ քիչ տեղում կը նմանակի Զ-ն» (էջ 79-80, բացատր. 7): Եղիշէ պատմագրի Ե. Գաբր) «չգլխով, չիմանում» ժխտականներ ժատին հեղինակը գրել է նայնպէս. «Նսխընդրելի պիտի ըլլային՝ ոչ զգան, ոչ իմանան» (էջ 160, բացատր. 9): — Անտեղի է այսքան խիստ սահմանափակել չ մասնիկի գործածութիւնը և սրբագրել Եղիշէին: Դարձեալ վերոյիշեալ քերականութեան վստահելի ձեռնարկում այսպիսի խիստ սահմանափակում չկայ: Էջ 160, տառած է. «Ոչ կ'տեղան կամ չկ'տեղան գոյ», էջ 206՝ «Կ'ըսուի նաեւ գործար՝ Զլործեմ, չլործելի, չլործեցի, չգործեցից, և այլն»:

9. Ժխտականի հետ կապ ունի նաեւ հետեւեալ սխալ բացատրութիւնը.

«Յիշենք նաեւ, որ հրամայականին (միւս), ապառնին, ալիւ անբեռնի (յ սնախ) ժառանգանքը կը կազմուի Մի՛ մասնիկով օգնութեամբ» (էջ 80, բացատր. 7): — Նոյն հրամայականին ինքնին ժխտական չունի, ինչպէս ունի, տանք, ներկան՝ սիրես «կը սիրես», ոչ սիրես կամ չսիրես «չես սիրեր»: Սխալ կը լինէր տեսլ՝ սիրես՝ «սիրէ», ժխտականը՝ ո՛չ սիրես կամ չսիրես: Մի՛ սիրեր ձեւը, որ նշանակում է «մի՛ սիրիր» կամ «մի՛ սիրեր», հրամայականի ժխտականը չէ, այլ բայի առանձին մի ձև է՝ արգելական, որով արգելքներ են հրամայում: Ծիշդ է, որ արգելականը միշտ ունի մի՛ արգելական մասնիկը:

Երկրորդ՝ սխալ է յայտարարել ուսուցչին և աշակերտին (հեղինակի տառած բացատրութիւնը հաստատուար է), թէ ալիւնի ժխտականը կազմուած է Մի՛ մասնիկի օգնութեամբ: Մի՛ մասնիկով գործածուած ապառնին յատուկ՝ հրամայականի կամ րդականի ժխտականի իմաստներ կորսող է ունենալ: Սակայն նրա ժխտականը կարող է ազատ կերպով կազմուել ոչ կամ մի՛ ժխտական մասնիկով. տե՛ս, օրինակ՝ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ, էջ 205-206, ուր կարգում ենք «ոչ գործեցից, ոչ գործիցեմ»: Հեղինակը աւելի ճիշդ է արտայայտուել էջ 187ում, ծան. 3. «Այս զոյգ ապառնիներուն ժխտականը կը կազմուի առաւելորար Մի՛ մասնիկով, բայց և ՈԶ-ով»:

Երրորդ՝ սխալ է նաեւ սովորեցնել, թէ ակոբոս գերբայի կամ ակոբոսայի ժխտականը յսնախ մի՛ մասնիկով է կազմուած: Հնարուար է, որ իր վերոյիշեալ աղբիւրը գրելուց առաջ, հեղինակը մեր նշած քերականութեան գրքում կարգացել է հետեւեալը. «Գրաբար մի՛ով արգելական կ'ըլլան նաեւ ապառնին, ստորագոտականն և աներեռնիքը. Մի՛ տեղացես, մի՛ տեղանիցես, մի՛ տեղանել» (էջ 160), առանց նկատելու, որ խօսքը արգելականի (ինչ որ ինքը կ'ըսել է «հրամայականի ժխտական») մասին է: Ըստ այսմ, նայն քերականութեան մէջ (էջ 413) կարգում ենք նաեւ. «Երբեմն խօսքի մէջ աներեռնիք բայ մը գիմաւար բայի տեղ կը դրուի՝ առանց ուրիշ բայէ կամ չաղկապէ մը կախում ունենալու ... Շատ անգամ արգելական խօսքեր այս կ'անոնով կը ձևանան. Մի՛ դուր տուաւ ինչ իմանալ բան զոր գրեալն է: Մի՛ յայլ ինչ պնծաւ» և այլն: Նայն քերականութեան մէջ երբեք տառած չէ, թէ անորոշ գերբայի (կամ անբեռնի) ժխտականը կազմուած է մի՛ ժխտական մասնիկի միջոցով, չէ տառած, որովհետեւ ճիշդ չէր լինի. ոչ կամ չ ժխտական մասնիկով ժխտ-

տական անարաշ դերբայի նրա օրինակներից են՝ «Եզովեցին զանձինս՝ ոչ ուսել եւ ոչ րմպել» (էջ 389, ներքեւից 4-3րդ տող), «Գրեցի ձեզ՝ շխառնալիլ ընդ կուսպարիեսս» (էջ 409, կանոն Ե.):

10. «Ի նախդիր նայցականի հետ ... կը բարգմանուի «ԴէՊ» բառով, կամ ալ պարզապէս նայցականով: Օր.՝ ... Ի բանակն (Գ. դաս) — «Գեպի բանակը», «բանակը», Ի բանա (Ե. դաս) — «Գեպի բան», «բան» (էջ 28, բացատր. 6): — Սխալ կը լինէր հրկու օրինակներում «դէպի» բառի գործածութիւնը: Մէջ բերենք լրիւ նախադասութիւնները «Արագ հասուցանելով ի բանակն իւր» (Գ. դաս). Արաւշէտը Սաթինիկին հասցընում է իր բանակը, բանակի մէջ, և ոչ թէ «դէպի բանակը» կամ բանակի կողմը. «Ընդէ՞ր թոյլ հառ զիս ըմբռնել և արկանել ի բան» (Ե. դաս), որի «արկանել ի բան»-ը հեղինակն ինքը (էջ 18, բացատր. 16) թարգմանել է «բանա նեակը», առանց «դէպի» բառի:

11. «Գրաբարի մեջ տեղանուններն իբր յոգնակի կը գործածուէին: Օր.՝ Մակի ... Վիրի ... Աղնիք» (էջ 34, բացատր. 5, ծան. 1): — Նշուած և նման ուրիշ բառեր գրաբարում տեղանուններ չեն, այլ տուեալ վայրերի բնակիչների կամ ժողովուրդների անունները, ինչպէս Հայի, Բոնք կարելի է թարգմանել նաև տեղանուններով:

12. «ՅՈՅԺ, ՅՈՒՈՎ — առաջինը կը նշանակէ «տաս, սասիկ» եւ կը գործածուի բայերու (նոս՝ ԸՆԴ ՓՈՔՈՒ ՍԱՀՄԱՆԵԱԼ), ամսկաններու, մակբայներու հետ ... իսկ երկրորդը՝ «տաս բազմաբիւ», կը գործածուի ԱՆԳԱՄ բառին, այլեւ ուրիշ գոյականներու հետ (ոչ յանալս)» (էջ 47, բացատր. 1, հոստաղով): — Հեղինակն այսպէս յաճախ է զարմացնում իր ինքնավստահ, բայց ... սխալ յայտարարութիւններով, ինչպէս այստեղ: Իբր յոյժ բառը չի կարող ածականաբար գործածուել գոյականի հետ, իսկ յոյժն իբր չի կարող մակբայաբար, ասենք՝ բայի հետ գործածուել: Ի՞նչ կ'ասի հեղինակը, երբ աշակերտները կամ զրաբարով «հետաքրքրուողը» «Նոր հայկազեան բառարան»-ում կարդան հետեւեալ բացատրութիւններն ու վկայութիւնները՝ ՅՈՅԺ բառի տակ. «Ստէպ առնթիւր այլոց բառից դնի սձով, որպէս Սաստիկ. կարի. ուժգին. առաւել. յետին. Աւխարուսն յոյժ, եր բազմաբիւն յոյժ, յոյժ բազմաբիւն, Առ յոյժ խնդուրեանն» և այլն, ուր յոյժ բառը գործածուած է գոյականների հետ իբրև ածական. ՅՈՒՈՎ բառի տակ՝ «Շատ. բազումս. յոյժ. առաւել. յաճախ. ստէպ. բազում անգամ. Ուսուցանէր մանկանց՝ սակաւ խօսել, եւ յոյժ իմանալ ... Ուսէ յոյժ ... Յոյժ փառաւորեցաւ ... Այսուքիկ ասին ի մենչ յոյժ», ուր յոյժ բառը գործածուած է բայերու հետ իբրև մակբայ: — Հեղինակը սխալ է մեկնաբանել Խորենացու հետեւեալ նախադասութեան՝ «Թէպէտ և հմք ածու փաքք և թուով յոյժ ընդ փոխուստիմանեալ» ընդգծուած բառերը. նրան թուացել է, թէ յոյժը մերաբերում է ստիմանեալ դերբային (տե՛ս մէջբերումը). ըստ այսմ պիտի թարգմանէր «փաքք չափի մէջ տաս ենք պահուած (մնացած)» (տե՛ս նրա հրկրորդ բացատրութիւնը, էջ 47): Իրականում յոյժը վերաբերում է փոխուստիմանեալ «չառ փաքք», և «թուով յոյժ ընդ փաքք սահմանեալ» բառերը նշանակում են «սահմանափակուած ենք տաս փոքր թուի տակ», բառացի. Սա. Մալխասեանը թարգմանել է «չառ սահմանափակ թուով (ենք)», որ ճիշդ է (Երևան, 1940, էջ 6):